Կազմված է 08.02.2021թ. և բաղկացած է 10 թերթից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ

Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021թ –ի փետրվարի 16-ի N 18-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

_____Ա.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Կ.Տ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ՝ 19.02.2020թ

ԳՐԱՆՑՄԱՆ N 18. 210.00818
ՀՎՀՀ 09205839
19.02.2020թ. գրանցված կանոնադրության
թիվ _____փոփոխությունը գրանցված՝
ՀՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության կողմից

«____» _____ 2021 թ.

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
<<Շ. ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>>
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/ նոր խմբագրությամբ /

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի «Շ.Ազնավուրի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն, գրանցման համարը՝ 18.210.00818) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, կրթադաստիարակչական ծրագրեր իրականացնող համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է, **որը հանդիսանում** է Սյունիքի մարզի «Գորիսի Գ. Պարոնյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 18.210.00819) **իրավահաջորդը, որը ստեղծվել է վերակազմավորման ձևով վերակազմավորման արդյունքում:** Սյունիքի մարզի «Գորիսի Գ. Պարոնյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավունքներն ու պարտականություններն անցնում են ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի «Շ.Ազնավուրի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ փոխանցման ակտին համապատասխան:

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի «Շ.Ազնավուրի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 05.12.2019թ. թիվ 97-Ա որոշման համաձայն հանդիսանում է Գորիսի «Շ.Ազնավուրի անվան երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը, որը ստեղծվել էր ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարի 19.10.2009թ. թիվ 163Ա և Գորիս համայնքի ավագանու 22.10.2009թ. թիվ 73Ա որոշումների համաձայն՝ Սյունիքի մարզի Գորիսի Շ. Ազնավուրի անվան երաժշտական թիվ 2 դպրոց համայնքային հիմնարկի (պետական գրանցման (հաշվառման) համարը 18.0052, վկայականի համար Բ 000590) վերակազմավորման ճանապարհով, հանդիսանում է նրան ամրացված իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

1.2.Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.3. Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքն է (այսուհետ՝ Հիմնադիր), որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարը:

1.4.Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5.Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.6. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.7. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.8.Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Ավանգարդ 1:

1.9.Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.10.Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Կազմակերպությունը ստեղծվում է մշակութային և նախնական մասնագիտական կրթություն իրականացնելու համար: Կազմակերպությունն ուսումնական հաստատության տիպի արվեստի դպրոց է:

2.2.Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

ա) երաժշտական կրթության և գործունեության իրականացում,

բ) արտադպրոցական կրթություն և գեղագիտական դաստիարակություն,

գ) ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, օժտված և տաղանդավոր երեխաներին համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար նախապատրաստում,

դ) մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցում,

ե) բնակչության և սոցիալական տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի, սպորտի և կիրառական արվեստի ուսուցողական ծրագրերի իրականացում,

զ)Կազմակերպությունն ապահովում է դպրոցականների նախասիրությունների, ունակությունների զարգացումը, երեխաների առողջության պահպանումն ու ամրապնդումը և վարքի շեղումների կանխարգելումը:

է) Կազմակերպության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային ու համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.3. Կազմակերպության հիմնական խնդիրներն են՝

ա) մինչև 18 տարեկան սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումը, հոգևոր, գեղագիտական, բնապահպանական և ֆիզիկական դաստիարակության ապահովումը՝ հաշվի առնելով նրանց պահանջմունքները, հետաքրքրությունները, հակումներն ու ընդունակությունները.

բ) մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,

գ) սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպումը, արդյունավետ պայմանների ապահովումը,

դ) դպրոցում ստացած գիտելիքների ամրապնդումն ու խորացումը, սովորողների տեսական գիտելիքների և գործնական ունակությունների փոխադարձ կապի ամրապնդումը, նրանց կարողությունների ու հմտությունների և ձեռներեցության զարգացումը,

ե) համակողմանիորեն և ներդաշնակ զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումը:

2.4.Կազմակերպությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

ա) լրացուցիչ կրթադաստիարակչական ծրագրերի իրականացում,

բ) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում,

գ) նախապատրաստական դասարանների բացում,

դ) երաժշտական կրթության կազմակերպում՝ առանց տարիքի սահմանափակման,

ե) ներկայացումների, համերգների, ցուցահանդեսների կազմակերպում և կրթական գործունեության այլ տեսակներ,

զ) հրատարակչական գործունեություն:

Կազմակերպությունը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1.Կազմակերպությունն իր ուղղություններին համապատասխան իրականացնում է կրթադաստիարակչական ծրագրեր՝ համաձայն իրենց կանոնադրության:

3.2. Կազմակերպությունում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլանների, ուսումնական ծրագրերի և ժամանակացույցին համապատասխան:

3.3. Դպրոցն իրավունք է վերապահում՝ կազմակերպելու վճարովի ուսուցում բոլոր բաժիններում: Դպրոցում ուսման վարձի չափը սահմանվում է համայնքի ավագանու որոշմամբ: Ուսման վարձի գանձման ժամկետները սահմանվում է դպրոցի տնօրինության կողմից:

3.4. Դպրոցի աշակերտության աշնանային, ձմեռային և գարնանային արձակուրդները հատկացվում են հանրակրթական դպրոցների համար սահմանված ժամանակահատվածներում:

3.5. Կազմակերպությունը գործում է ամբողջ տարվա ընթացքում: Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Կազմակերպությունում սահմանվում է վեցօրյա ուսումնական շաբաթ՝ ըստ ուսումնական պլանի:

3.6. Կազմակերպությունը մշակում է գործունեության իր ծրագրերը՝ հաշվի առնելով սաների հետաքրքրություններն ու հակումները, ընտանիքի և կրթական համակարգի պահանջները:

3.7. Սաներն ընդգրկվում են կազմակերպության նույն կամ տարբեր տարիքի միավորումներում (խմբակ, ստուդիա, ակումբ, համույթ, թատրոն, մարզական խումբ և այլն): Յուրաքանչյուր սան իրավունք ունի ընդգրկվելու տարբեր միավորումներում:

3.8. Դպրոցում սովորողների համար սահմանվում է յոթնամյա, վեցամյա, հնգամյա և քառամյա ժամանակահատվածներ՝

ա) 7-ամյա ուսման տևողություն սահմանվում է հետևյալ մասնագիտությունների համար՝

- դաշնամուր/ երգեհոն, կլավեսին/,
- ջութակ, թավջութակ /ալտ, կոնտրաբաս/,
- երգեցողության և ձայնի պահպանման բաժնում /7-9 տարեկան սովորողների համար/,

բ) 6-ամյա ուսման տևողություն սահմանվում է՝

- գեղարվեստ /բացի դեկորատիվ կիրառական արվեստի/,
- պարարվեստ,
- երգեցողության և ձայնի պահպանման բաժնում /10-12 տարեկան սովորողների համար/,

գ) 5-ամյա ուսման տևողությունը սահմանվում է հետևյալ մասնագիտությունների համար՝

- բոլոր շնչային գործիքների /դասական/,
- բոլոր ժողովրդական գործիքների,
- բոլոր հարվածային գործիքների,
- կերպարվեստ,

դ) 4-ամյա ուսման տևողություն սահմանվում է հետևյալ մասնագիտությունների համար՝

- դեկորատիվ կիրառական արվեստի բաժին,
- թատերական բաժին:

3.9. Ըստ կրթադաստիարակչական ծրագրերի՝ դպրոցում կարող են գործել հետևյալ բաժինները՝

ա) դասական և ժողովրդական նվագարանների բաժին,

բ) երգեցողության և ձայնի մշակման բաժին,

գ) կերպարվեստի բաժին,

դ) դեկորատիվ կիրառական արվեստի բաժին,

ե) պարարվեստի /դասական, ժողովրդական և ժամանակակից/ բաժին,

զ) թատերական բաժին:

3.10. Կազմակերպությունում կարող են բացվել ինչպես վերը նշված բոլոր բաժինները, այնպես էլ նրանցից մի քանիսը: Նոր բաժիններ բացվում են ըստ բնակչության ցանկության և մասնագետ մանկավարժների առկայության դեպքում:

3.11. Առաջին դասարան սովորողների տեղափոխումը դպրոցից դպրոց թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում:

3.12. Բոլոր տեղափոխումները հնարավոր է ինչպես ուսումնական տարվա սկզբին, այնպես էլ ուսումնական տարվա ընթացքում: Շրջանավարտը ավարտական քննությունները համապատասխան ծրագրով հանձնելու դեպքում ստանում է ավարտական վկայական: Գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտները ստանում են «Գերազանցության» վկայական:

3.13 Ըստ անհրաժեշտության, առանց վերադաս մարմինների հետ համաձայնեցնելու կազմակերպության տնօրինությունը իրավասու է փոխել ավարտական քննությունների ժամկետները, ինչպես նաև բացառության կարգով առանձին աշակերտների համար սահմանել փոխադրական ստուգարքների և ավարտական քննությունների նպատակահարմար ժամկետներ, սակայն ոչ ուշ, քան նոր ուսումնական տարվա սեպտեմբերի 30-ը:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. Կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորած գործադիր մարմինը՝ տնօրենը, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով:

4.2. Կազմակերպության կրթադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ:

Մանկավարժական խորհուրդն իր լիազորության սահմաններում քննարկում և առաջարկություններ է ներկայացնում՝

ա) կազմակերպության կանոնադրության վերաբերյալ,

բ) կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների և կրթական ծրագրերի, առաջադրված խնդիրների իրականացման ձևերի ու միջոցների վերաբերյալ,

գ) ուսումնական պլանների ու ծրագրերի վերաբերյալ՝ ելնելով կազմակերպության հիմնական խնդիրներից, նպատակներից, կադրային և նյութական հնարավորություններից, սաների ու նրանց ծնողների հետաքրքրություններից,

դ) լրացուցիչ կրթական ծրագրերի և առաջավոր փորձի տարածման վերաբերյալ,

ե) մանկավարժական աշխատողների որակավորման բարձրացման և խրախուսման վերաբերյալ:

Կազմակերպության մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են մանկավարժական աշխատողները: Մանկավարժական խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նաև հիմնադրի և ծնողական համայնքի ներկայացուցիչներ:

Մանկավարժական խորհրդի նիստը հրավիրվում է առնվազն եռամսյակը մեկ անգամ:

Մանկավարժական խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Մանկավարժական խորհրդի նիստերը նախագահում է հաստատության տնօրենը:

4.3. Կազմակերպության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.4. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) կազմակերպության հիմնադրումը,

բ) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

գ) կազմակերպության օրինակելի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը,

դ) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

ե) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

4.5. Հիմնադիրը իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

4.6. Հիմնադիրը՝

ա) կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ,

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

դ) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,

ե) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

զ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս իր գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

է) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը (եթե կազմակերպությունը չունի կոլեգիալ կառավարման մարմին),

ը) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ,

թ) հաստատում է կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը:

4.7.Կազմակերպության տնօրենն իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի՝ պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

4.8. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ,

բ) նախագահում է կազմակերպության մանկավարժական խորհրդի նիստերը,

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով ու սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

դ) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

ե) աշխատանքի նշանակում ու աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

է) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

ը)սահմանում է կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

թ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար,

ժա) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,

ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,

ժգ) կազմում է կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմնի հաստատմանը,

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

4.9. Տնօրենի բացակայության դեպքում, լիազորված մարմնի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

4.10. Կազմակերպության տնօրենի՝ ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը՝

ա) պատասխանատու է կազմակերպությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի և սաների գիտելիքների մակարդակի համար,

բ) վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սաների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնավորում սաների ուսումնական ծանրաբեռնվածությունը,

գ) կազմակերպությունում կազմակերպում է մեթոդական աշխատանք, կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակ և ուսումնադաստիարակչական աշխատանքի մասին հաշվետվություններ,

դ) ընդհանրացնում և տարածում է լավագույն խմբակավարների աշխատանքի դրական փորձը, մանկավարժներին հաղորդակից է դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին,

ե) ապահովում է կազմակերպության և ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը,

զ) կազմակերպում է սովորողների հանգիստը և ժամանցը, միջոցներ ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցուցաբերելու համար:

4.11. Կազմակերպության տնօրենի՝ տնտեսական աշխատանքի գծով տեղակալը՝

ա) պատասխանատու է կազմակերպության շենքի և գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, կազմակերպության սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, կազմակերպության ուսումնական պարապմունքներին՝ դասասենյակների

ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության և սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար,

բ) միջոցներ է ձեռնարկում կազմակերպության ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար:

4.12.**Ուսուցիչը**, խմբակի ղեկավարը (խմբակավարը)՝

ա) դաստիարակչական աշխատանք է կատարում իր **բաժնի** /խմբակի/ սաների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս **բաժինների ուսուցիչների** /խմբակավարների/ հետ,

բ) ապահովում է սովորողների նկատմամբ կազմակերպության և ընտանիքի մանկավարժական պահանջների միասնությունը,

գ) իրականացնում է **դասարանի** /խմբակի/ համար սահմանված գործավարությունը, կազմակերպության տնօրինությանը ներկայացնում սովորողների հաճախումների և վարքի մասին տեղեկություններ,

դ) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ,

ե) արգելում է բոլոր այն նախաձեռնությունները, որոնք կարող են սաների առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

5.2. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

5.3. Հիմնադիրը՝ սեփականության իրավունքով կազմակերպության պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

5.4. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

5.5. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

5.6. Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

5.7. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ կազմակերպության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել 1 տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները կազմակերպության սեփականությունն են՝ բացառությամբ ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարների, որոնք սահմանված կարգով ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: Կազմակերպությանն

ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

5.8. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

5.9. Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեով նախատեսված միջոցների հաշվին (պետության կարիքների համար ծառայությունների մատուցում, աշխատանքների կատարում, ապրանքների մատակարարում), Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

5.10 Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վճարովի կրթադաստիարակչական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները,

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

5.11. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ հիմնադրի կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

5.12. Կազմակերպությունը շահույթը նպատակառուղղում է իր կանոնադրական խնդիրների իրականացմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, աշխատողների սոցիալական հարցերի բարելավմանը:

5.13. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

6.1. Կազմակերպության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները որպես կանոն մինչև 18 տարեկան սաներն են, նրանց ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

6.2. Երեխաների ընդունելության ժամանակ կազմակերպության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (նրանց օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կազմակերպության կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են մանկապատանեկան կազմակերպության գործունեությունը: Երեխաների իրավունքները և պարտականությունները սահմանվում են համապատասխան պայմանագրային հիմունքներով ու կազմակերպության ներքին կարգապահական կանոններով:

6.3. Սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են կազմակերպության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

6.4. Կազմակերպության անձնակազմի համալրման կարգը կանոնակարգվում է նրա կանոնադրությամբ:

6.5. Մանկավարժական աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր, ըստ մասնագիտության, ունեն անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

6.6. Կազմակերպության մանկավարժն իրավունք ունի մասնակցելու կազմակերպության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

6.7. Կազմակերպության մանկավարժական և մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, կազմակերպության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

6.8. Կազմակերպության մանկավարժական աշխատողները պարտավոր են ապահովել կրթադաստիարակչական ծրագրերի կատարումը:

6.9. Կազմակերպությունում արգելվում է սաների նկատմամբ հոգեկան և ֆիզիկական բռնության գործադրումը:

6.10. Սանը պարտավոր է՝

ա) բարեխղճորեն սովորել,

բ) խնամքով վերաբերվել կազմակերպության գույքին,

գ)հարգել կազմակերպության սաների և աշխատողների իրավունքներն ու արժանապատվությունը,

դ) պահպանել հաստատության ներքին կարգապահական կանոնները:

6.11.Կազմակերպության երեխաների իրավունքները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

7.1.Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

7.2.Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: